



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

-- հուլիսի 2021 թվականի №---Ա
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի №151Ա ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՍԻՆԳԼ ԳՈՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՋԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՍԻՆԳԼ ԳՈՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հուլիսի 9-ի գրությամբ խնդրել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի հուլիսի 21-ի №151Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Սանդաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (իզոբիության) արտադրության №0212 լիցենզիայի (այսուհետ՝ №0212 լիցենզիա) գործողության ժամկետը երկարաձգել 15 տարով: Միաժամանակ Ընկերությունը 2021 թվականի հուլիսի 9-ի գրությամբ ներկայացրել է Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 77-րդ կետով պահանջվող Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության կողմից «Սանդաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման նպատակով տրամադրված 2021 թվականի հուլիսի 9-ի №0248-21 ջրօգտագործման թույլտվությունը, որում նշված Կայանի ջրառի ելքի մեծությունը, ջրառի և ջրահեռացման նիշերը տարբերվում են 2005 թվականի դեկտեմբերի 20-ի Կայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ԲՓ-146 և 2005 թվականի սեպտեմբերի 17-ի «Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» փակ բաժնետիրական ընկերության փորձաքննական եզրակացություններում նշված Կայանի հաշվարկային ելքի մեծության, Կայանի ջրառի և ջրահեռացման նիշերից,

բ) Կարգի 76-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտով դիմում է Հանձնաժողով, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտից 8 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի հուլիսի 14-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը որևէ փաստարկ չի ներկայացրել,

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 76-րդ կետի պահանջը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և Կարգը՝ **Հանձնաժողովը որոշում է.**

1. Հանձնաժողովի 2006 թվականի հուլիսի 21-ի «ՍԻՆԳԼ ԳՈՌ» սահմանաակ պատասխանատվությամբ ընկերության «Սանդաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №151Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Սանդաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0212 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել տասնհինգ տարով՝ որոշման՝
 - 1) 1-ին կետում «Սանդաղբյուր գետի վրա» բառերը փոխարինելով «Որոտան գետի Սանդաղբյուր վտակի վրա» բառերով, իսկ «15 տարի» բառերը՝ «մինչև 2036 թվականի հուլիսի 21-ը» բառերով,
 - 2) 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում՝ «մինչև 2021 թվականի հուլիսի 21-ը» բառերը փոխարինելով «մինչև 2036 թվականի հուլիսի 21-ը» բառերով, 5-րդ կետում «Սանդաղբյուր գետի վրա» բառերը՝ «Որոտան գետի Սանդաղբյուր վտակի վրա» բառերով:
2. Կարգի 76-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:

3. Պարտավորեցնել Ընկերությանը սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած Կայանի ճշգրտված ելքերով և ջրառի ու ջրահեռացման նիշերով նախագիծը (նախագծի փոփոխությունները)՝ դրական փորձագիտական եզրակացություններով, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում համապատասխան հիմնավորումներ:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝

1) «Սանդաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը «ՍԻՆԳԼ ԳՈՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համար ավարտվում է 2021 թվականի հուլիսի 21-ին,

2) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 22-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հուլիսի 2021թ.